ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ Ε/13/332-22 առ "15" 02 2022թ.

№ _____ առ "___" _____ 2022թ

«Էփրան» ՍՊԸ տնօրեն
պրն Հ.Վարդանյանին

(պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ)

Հարգելի՛ պարոն Վարդանյան,

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար ՀԱԷԿ-ի առանձին հատկացված հրապարակում նոր 110/220 կՎ բաց բաշխիչ սարքերի (ԲԲՍ-ի) կառուցման ապամոնտաժային, շինմոնտաժային և գործարկման աշխատանքների ձեռք բերման նպատակով հայտարարված ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Էփրան» ՍՊԸ-ի միջև կնքվել է ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21-02/24 առ 12.01.2022թ պայմանագիրը (այսուհետ-Պայմանագիր):

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության թիվ 526-Ն առ 04.05.17 թ որոշման 18-րդ կետը՝ Ձեզ է ուղարկվել թիվ 1-02/24 լրացուցիչ համաձայնագրի նախագիծը, որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության թիվ 526-Ն առ 04.05.17թ որոշման 33-րդ կետի 12-րդ ենթակետը և Պայմանագրի 8.13 կետը սահմանված ժամկետում պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Քանի որ սահմանված ժամկետում Ձեր կողմից ներկայացված տուժանքի ձևով որակավորման և պայմանագրի ապահովումները չեն փոխարինվել նոր ապահովումներով և չի ներկայացվել լրացուցիչ համաձայնագիրը, տեղեկացնում ենք Ձեզ, որ Պայմանագիրը «ՀԱԷԿ» ՓԲԸ կողմից միակողմանի լուծվում է:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**

Կատարող՝ ԳԲԲ գլխավոր մասնագետ
Հ.Ռամազյան
+374 10 20 04 91